Կ. ՊՈԼՍԻ «ԱՍԻԱ» ԹԵՐԹԸ

Գ. Ա. ՄԱԳԻՈՅԱՆ

1872—1874 թթ. Կ. Պոլսում լույս է տեսել «Ասիա» եռօրյա թերթը՝ քառածալ, 8 փոքրադիր էջերով։ Այն սկզբում ունեցել է կղերա-պահպանողական ուղղություն, ուստի անողոք ծաղրի է ենթարկվել այդ տարիներին Հակոբ Պարոնյանի խմբագրությամբ լույս տեսնող «Մեղու» դեմոկրատական երգիծաթերթի կողմից։ Նրա գոյության վերջին տասնմեկ ամսում խմբագրի պաշտոնը ստանձնել է 26-ամյա երիտասարդ հրապարակախոս Մկրտիչ Փորթուգալյանը, որն արմատական փոփոխություն է մտցրել թերթում, այն դարձնելով դեմոկրատական օրգան։

Թերթի առաջին համարը՝ «Ասիա—Թարգման հայրենյաց» անունով լույս է տեսել 1872 թ. հոկտեմբերի 7-ին։ Նրա տնօրեն-խմբագիրը թուրքական տպագրական տեսչության պաշտոնյա Հովակիմ Ռեհյանն էր, որը «բժշկի պես բան մրն էր», ինչպես գրում է Արփիար Արփիարյանը։ Հայկական մյուս թերթերի օրինակով այստեղ էլ նյութերը տպագրվում էին հայերեն և հայատառ թուրքերեն։

Առաջին համարի թուրքերեն խմբագրականում Ռեհյանը հորդոր էր կարդում հայերին՝ ամուր կառչել հայրենի հողին, երբեք չլքել այն. պանդխտելը, օտարության մեջ մշակի և սպասավորի պաշտոններ վարելը անվայել բան է հայ մարդու համար։ «Ազատություն կարծյաց» հայերեն հոդվածում այն միտքն էր զարգացնում, թե ընդունելի, ըղձալի բան է կարծիքների ազատությունը, բայց հայերը սխալ են ըմբռնում դրա իմաստը. վատ են անում, երբ առաջնորդվելով մերժելի սկզբունքներով՝ իրենց դպրոցներում օտար երեխաներ են ընդունում, ավելի վատ՝ «երբ օտար դաստիարակներու կհանձնվին մեր զավակունք»։ Նուտով Ռեհյանը ավելի է պարզում իր միտքը. բանից դուրս է գալիս, որ «օտար» բառի տակ պետք է հասկանալ կաթոլիկ հայերին։ Նա շարունակում է. «Մեր վարժարաններու մեջ հռոմեական վարդապետներ իբրև հայկարանության դասատու կընդունվին. նոցա դպրոցներուն մեջ մեր մեկ հայը գեթ տնտեսի պաշտոնով չընդունվիր»։

Ի լրումն այս ամենի, Հ. Ռեհյանը թերթի էջերը լցնում էր Աստվածաշնչից կատարված թարգմանություններով, և այդ այն ժամանակ, երբ մյուս հայ թերթերը արդեն վաղուց հրաժարվել էին այդ թեմաներից։

Հրագրի ընդհանուր բարոյախոսական տոնը, ազգի ներկայի և ապագայի մասին տարտամ դատողությունները, խիստ պահպանողական կեցվածքը քննադատվում էին ժամանակի հայկական մամուլի կողմից։ «Մեղուն» ծաղրում էր թերթի յուրաքանչյուր համարը, նշելով, որ այն ոչ միայն սկզբունք, այլև՝ դեմք չունի։ «Մասիսը» ցույց էր տալիս խմբագրի տգիտությունը, Աստվածաշնչից կատարված թարգմանությունների պարունակած աղավաղումները, մամուլի միջոցով կրոնի պրոպագանդման անմտությունը։

խմբագիրը, օգտվելով տպագրական ազատությունից իր ունեցած դիրքից, կարողանում էր ընդդիմախոսել, երբեմն կծու պատասխաններ տալ իր քննադատներին, սակայն շուտով համոզվում է, որ ինքը նոր բան չունի ասելու և հեռանում է ասպարեզից։ 1873 թ. մարտի 17-ի 24-րդ համարում նա ազդարարում է. «Նկատելով, որ մեր անձնական պաշտոնավարության ծանր զբաղմունքները այլևս չպիտի ներեն մեզ մեր թերթին խմբագրությունը շարունակել, պարտավորեցանք այսուհետև խմբագրությունը ամբողջապես հաջորդ 25-րդ թիվեն սկսյալ մեր վաղեմի բարեկամներեն՝ մեծ. Խանձյան Էֆենտիին հանձնել, որ գրական արժանիքն ու ազգասիրական ոգին ի մոտո ճանչնալով, վստահ եմք, որ համենայնի մեր ընթերցասեր հասարակության ընդհանուր գոհունակության և համակրանաց պիտի արժանանա»։

Հակոբ Խանձյանը թերթը խմբագրել է 1873 թ. մարտի 20-ից մինչև նույն տարվա նոյեմբերի վերջը. մեր հաշվով հրատարակել է մոտավորապես 44 համար. որոնք առայժմ հայկական մատենադարաններում չեն հայտնաբերվել։ «Ասիայի» այդ համարները ևս դարձել են Հ. Պարոնյանի «Մեղու» երգիծաթերթի ծաղրի մշտական առարկան։ Նա ամեն առիթով ցույց է տալիս «Ասիայի» որևէ սխալը, հակասական մտքերը, գործունեության որոշակի ծրագրի, սկզբունքի բացակայությունը։ Բնիսյանից եկող այն տեսակետը, թե հայկական դպրոցներում չի քարոզվում ազգային ավանդությունների պահպանման գաղափարը, Խանձյանը զարգացնում է իր «Ազգային դպրոցաց վնասակարությունը» արտառոց վերնագիրը կրող խմբագրականում, որը Պարոնյանը համարում է տրամաբանությունից զուրկ թոթովանք և եզրակացնում, որ խմբագիրը «յուր միտքը հասկցնելու անընդունակ է»։ Մի այլ դեպքում երգիծաբանը հեգնանքով է խոսում Խանձյանի այն համոզման մասին, թե «հիվանդ մը կամ դարմանելու է կամ մեռցնելու»։ Այդ առթիվ նա գրում է. «Եթե այս կարծիքը հիվանդ լրագրաց համար ալ բսվեր, «Ասիա» մեկ ժամ ապրեցնելը մահացու մեղք պիտի ըլլար, որովհետև բժշկելու բնավ հույս չկա, մանավանդ այս կարծիքը հայտնելեն հետո»[1]։

Իր երգիծաթերթի «Ապտակներ» բաժնում Պարոնյանը ցույց է տալիս, որ թերթի լեզուն անմշակ է, աղաղակող սխալներ կան թարգմանությունների մեջ, «տասը տողի մեջ հինգ հակասություն կիյնա». «Չկա «Ասիա» մը, որուն մեջ կամ հակասություն, կամ հետս կոչում չըլլա»[2]. «Եթե լրագրին վրա գրված թվականը 1860 ըլլար, իր հոդվածները ավելի մեծ ընդունելություն կգտնեին... Եթե խմբագիրն հանցանք մ՚ունի՝ ան ալ ուշ ծնած ըլլալն է»[3]։

Խանձյանը ևս շուտով հեռանում է լրագրական ասպարեզից։ Այդ առթիվ արտոնատեր Բնիսյանն ազդարարում է. «Խանձյան Հակոբ Էֆենտին «Ասիայի» խմբագրությունեն հրաժարած ըլլալով, սույն պաշտոնը Փորթուգալյան Մկրտիչ Էֆենտիին հանձնեցինք՝ թերթին վերաբերյալ նյութական և բարոյական բոլոր պատասխանատվությամբ հանդերձ»[4]։

1873 թ. դեկտեմբերի 1-ից թերթն սկսում է հրատարակվել Մ. Փորթուգալյանի խմբագրությամբ՝ «Ասիա—ձայն Հայաստանի» խորագրով, նոր հա-

---

1 Հ. Պարոնյան, Երկեր, հատ. 7, էջ 72։

2 Նույն տեղում, էջ 68։

3 Սույն տեղում։

4 «Ասիա—ձայն Հայաստանի», 1873, № 1։

մարակալումով (№ 1) և «հրատարակության Ա շրջան» հավելումով։ Սկզբում լույս է տեսնում երեք օրը մեկ անգամ, իսկ 1874 թ. մայիսի 15 (27)-ից դառնում է օրաթերթ։ Իր դեմոկրատական ուղղության պատճառով թերթը խափանվում է Պատրիարքարանի պահանջով նույն տարվա հոկտեմբերի 21-ին, գոյատևելով ընդամենը 11 ամիս (140 համար)։

Անցյալ դարի 70-ական թթ. Պոլսում լույս տեսնող պարբերականներից Մ. Փորթուգալյանի «Ասիան» իր պատվավոր տեղն ունի հայ մամուլի պատմության մեջ։ Արփիար Արփիարյանը այդ տասնամյակի գրական կյանքը բնութագրելիս ընդգծում է թերթի մարտական բնույթը։ «Ասիան»,— գրում է նա,— երբեմն երբեմն կարդալու առիթը կունենայի։ Ոչ «Մասիսին» ծանրությունը կգտնեի հոն, ոչ «Օրագրին» հանդգնությունը. գրական հրապույր մըն ալ չուներ, բայց չեմ գիտեր ինչ շեշտ մը կար, որ կքաշեր զիս։ Կզգայի, թե խմբագիրը ինձի անծանոթ աղնիվ հայ մը ըլլալու է, խռովյալ սրտի մը աղաղակը կը լսեի»[5]։ Այս խոսքերը Ա. Արփիարյանը գրել է Փորթուգալյանի «Ասիան» փակվելուց 26 տարի հետո, երբ արդեն մոտիկից շփվել էր Փորթուգալյանի հետ, զգացել, որ այդ փորրամարմին, առերևույթ համեստ մարդը «երկաթի պես ամուր, հստակ համոզումներու, որոշ գաղափարներու» տեր անձ է, ափսոսացել է, որ ժամանակին չի հետևել նրա լրագրական առաջին քայլերին, ուստի նշել է, որ անչափ կարևոր է Փորթուգալյանի այդ շրջանի գործունեության վերականգնումը։ «Այս խնդիրներու վրա ձեռնհասությամբ գրելու վիճակի մեջ չեմ,— գրել է նա,— և կփափարիմ, որ պ. Փորթուգալյան քիչ մը հանգիստ երբ առնե, ինք ծանոթացնե իր հիշատակները»[6]։ Հրապարակախոս և հասարակական գործիչ Մ. Փորթուգալյանը, ճիշտ է, հետագայում գրեց հուշեր իր կյանքի և ապրած պատմաշրջանի բոլոր նշանակալից դեպքերի վերլուծությամբ։ Բայց նրա ավելի քան կեսդարյա գրական-հասարակական գործունեության մեջ մեկ տարին քիչ նստվածք էր տվել. «Ասիայի» շրջանի մասին գրեց ընդամենը մի պարբերություն։

Այժմ՝ հարյուր տարի անց, հիմնվելով թերթի 140 համարների, ինչպես նաև ժամանակակից մամուլի ու գործիչների վկայությունների վրա, հնարավոր է միայն ընդհանուր գծերով վերականգնել թերթի գործունեության պատկերը։

Ի՞նչ նորություն էր իր հետ բերում երիտասարդ խմբագիրը։ Հասարակությանը հուզող ի՞նչ հարցեր էր արծարծում իր խմբագրականներում։ Նոր չէին Փորթուգալյանի բարձրացրած հարցերը՝ Ազգային սահմանադրություն, Ազգային ժողով, Պատրիարքարան, ամիրայություն, երեսփոխանություն, դպրոց, եկեղեցի, մի խոսքով՝ բոլոր այն հարցերը, որոնք զբաղեցնում էին մամուլի մնացած օրգաններին, ինչպես և հին «Ասիային»։ Նոր էր, սակայն, հարցերի քննարկման եղանակը։ Նա գրում էր ժողովրդի անունից, հանդես էր գալիս նրա շահերի պաշտպանությամբ։ Առաջին օրվանից նա հակադրվում է «Օրագրին», «Մամուլին», «Փունջին», մատնացույց անում նրանց անսկզբունքայնությունը, տիրասիրությունը, «Մասիսին» քննադատում է լիբերալ հա-

5 «Նոր կյանք», Լոնդոն, 1900, էջ 260։
6 Նույն տեղում։

յագքների համար, ձայնակցում է «Մեղուին», թև ու թիկունք տալիս նրան։ Այստեղ էլ արդեն զգացվում է թերթի արտոնատեր Բեհչյանի և նրա խմբագիր Փորթուգալյանի հայացքների հակադրությունը։ Առաջինի համակրությունը վայելող թերթերը դառնում են երկրորդի հարձակումների թիրախը, առաջինի ատելի թերթերը և առաջին հերթին «Մեղուն» բարձր գնահատական է ստանում խմբագրի կողմից։ Այս հոդի վրա Բեհչյանը թերթում հանդես է գալիս հայտարարությամբ, որ թերթի պարունակությունը «իրեն չի վերաբերում», որ ինքը չի կարող պատասխանատու համարվել «խմբագրի գաղափարին կամ որևիցե գրությանը»։

Փորթուգալյանի օրով արմատապես փոխվում է թերթի լեզուն և ուղղությունը. երբեմնի «Մեղուի» անողոք ծաղրի առարկա «Ասիան» դառնում է Հ. Պարոնյանի հուսալի զինակիցը։ Առաջին իսկ խմբագրականում Փորթուգալյանը հայտնում է իր վճիռը՝ ներքին և արտաքին լրատվությունից բացի տպագրել «ազգի մտավոր և բարոյական զարգացմանը նպաստող» հոդվածներ, հեռու մնալ «ունայն և տաղտուկ» վիճաբանություններից, որոնցով լի էին պոլսահայ թերթերը, իրեն առաջնորդ ունենալ ժողովրդի շահը, ձայն բարձրացնել և բողոքել «գեղծմանց» և ազգային հիմնարկների ու պաշտոնատար անձանց՝ ժողովրդի շահերին վնասող արարքների դեմ։

Մ. Փորթուգալյանը «Ազգային սահմանադրությունը» համարում էր հասարակ ժողովրդի մի փոքրիկ հաղթանակը ամիրայության նկատմամբ և պայքարի էր մտնում՝ այն ժողովրդի շահերին ծառայեցնելու համար։ «Սահմանադրությունը իր արդի ամուլ վիճակին մեջ ոմանց շատ հարմար կուգա եղեր, որ լաստիքի պես բաշկոտեն զայն և ուղածնուն պես խաղան անոր հետ»։ Ուստի նա լուրջ կերպով դնում է Ազգային ժողովի, վարչական մարմինների և երեսփոխանների գործունեության նկատմամբ ժողովրդի վերահսկողության իրականացման հարցը։ Նա ուղղակի գրում է. «Բայց ժողովուրդին գործին կուգա՞, որ երեսփոխանական ժողովը մեկ քանի մարդոց խաղալիք եղած ատեն, ինչպես այժմ, իրեն հակակշիռ զորություն (բոնիրոլ) մը չըլլա որոշակի»[1]։ Նա իր կրակն ուղղում է «Օրագրի» դեմ, բնութագրում նրա խմբագիր Օգսեն Խոճասարյանի վարքագիծը. «Քու և քեզպեսներուն երեսեն թշվառացյալ ազգին թափած արտասուքներուն մեջ պիտի խեղդվիս օր մը և այդ օրը հեռու չէ անշուշտ»։ Խոճասարյանը մեծ ազդեցություն ունի տգետների վրա, սակայն դա երկար տևել չի կարող՝ «անոնց աչքին վրայեն ալ կամաց-կամաց այդ խավարը պիտի փարատի և քիչ ատենեն ետիզ դարձած ատենդ չպիտի գտնես այն պարզամիտները, որոնց առջեն ընկած դեպի խորխորատ կտանիս այժմ»[2]։

Նա հարձակվում է նաև մյուս թերթերի վրա, որոնք պաշտպանում են Ստեփան Փափազյանի, Քրիստոսատուր Ղազարոսյանի, Հովհաննես Ջամուրճյանի կազմած հակաժողովրդական «Ղալաթիո ոճախը»։ Նրան ընդդիմախոսում է «Հայրենիք» թերթը, որը Պարոնյանի գնահատմամբ այդ օրերին «մեծ աղաներու օրկանն» էր։ Փորթուգալյանը հեգնանքով պատասխանում է. «Ողջամիտ ընթերցողը կշռած են արդեն «Ասիայի» և «Հայրենիքի» մեջ եղած տարբերությունը։ Նա կտեսնենք, որ միշտ հարստահարիչները կպաշտպանեն, իսկ

---

[1] «Ասիա—ձայն Հայաստանի», № 20, հավելված։

[2] Սույն տեղում։

մենք մեր գրիչն ու կարողությունը հալածյալ ու ընկճյալ ժողովուրդին նվիրած ըլլալով, հարստահարչաց երդվյալ հակառակորդ ենք և պիտի ըլլանք ընդմիշտ»[9]։

Փորթուգալյանը բարձր էր գնահատում ժողովրդի ուժը և ներքին հնարավորությունները և նպատակ էր դնում արթնացնել, կյանքի կոչել ժողովրդին, նրան գիտակցել տալ իր հզորությունը, հորդորել այդ ուժը արժանապատվությամբ և նպատակային ձևով օգտագործելու։ «Հուսալի՞ բան է,— գրում է նա Ազգային սահմանադրության 14-րդ տարեդարձի առթիվ հրատարակած խմբագրականում,— թե այն ժողովուրդը, որ մեծամեծ ազդեցությանց տեր ամիրաներուն դեմ ելավ, Սահմանադրական գրոշը պարզեց, այսօր այն աստիճան թմրած ըլլա, որ Քրիստոստուրի և Փափազյանի պես չորսնոցներու դեմ չկրնար իր իրավունքը պաշտպանել։ Ազգը մեռած չէ, այլ կքնանա։ Սակայն գիշերը 12 ժամ միայն կտևե։ Քիչ ատենեն առավոտ կծագե»[10]։

Անողոք է նրա քննադատությունը Սահմանադրությունը չարաշահողների, այն իրենց փառասիրական և ազգադավ նպատակներին ծառայեցնելու ձգտողների նկատմամբ։ Ահա Ստեփան Փափազյանը, որ «Զամուրճյանի հավատարիմ փոքրավորը եղած՝ Արմենակ Հայկունիի պես հայազգի փիլիսոփա մը, որ մեր գրականության փառքն է, Զոյիլյան քննադատություններով անվանարկելու աշխատեցավ... Ո՞վ չճանչնար այսչափ տարվան Զամուրճյանը. ո՞վ չգիտեր ազգը պառակտելու և ծախելու համար նորա գործած ճիգվեթությունները»։ Ո՞վ չգիտե Քրիստոստուր Ղազարոսյանին, որ Փրկչի հիվանդանոցի վարժարանի տնօրեն եղած ժամանակ այրել տվեց Ռուսսոյի 12 փառակազմ հատորները. «Եվ այդ գիրք այրող դահիճը դասատվություն կընե, ազգային ժողովներու ալ անդամ եղած է. ուստ՞ում պիտի տարածե ազգին մեջ, լուսավորությո՞ւն պիտի սփռե եղեր դավառաց մեջ»[11]։

Կարճ ժամանակում թերթը մեծ տարածում է գտնում, արժանանում շատերի բաջալերանքին։ Ընդառաջելով իր շքավոր ընթերցողների պահանջին, Փարթուգալյանը «Ասիան» դարձնում է օրաթերթ, հետագայում էլ «ամենուն մատչելի դարձնելու» նպատակով կիսով չափ էժանացնում է թերթի գինը։ Այդ առթիվ նա գրում էր, որ ինքը իր «գրիչն ու անձը ժողովրդին՝ այն հասարակ կոչված և ցածրհոգի գրիչներեն նախատված ժողովրդին» նվիրած լինելով՝ պատրաստ է ամեն զոհողության։ «Հարուստները և հարստահարիչները,— ավելացնում է նա,— ոսկեղեն պատնեշներ կկանգնեն և նոցա ետին կպատըսպարեն զինքյանս, իսկ խեղճ ժողովուրդը, բաց հրապարակի վրա մնացած, տիրապետներու և խաբեբաներու ոտից կոխան է դարձեր անխնա, զո՞ է եղեր բաղաքական և կրոնական տզրուկներու։ Ահա այդ խեղճ ու անօգնական ժողովուրդին համար պետք է խոսել ու գրել. դորա իրավունքին պաշտպանությանը նվիրած եմք մեր գրիչը, այդ ժողովուրդին՝ որ ընդհանրապես աղքատիկ գործավորներե կբաղկանա։ Դոցա հետ է գլխավորապես, որ կուզեմք խոսիլ ամեն օր մեր թերթով, որոց, ինչպես հայտնի է, մեծ մասին համար զգալի է օրական 10 և 20 փարայի տարբերությունը»[12]։

---

9 Նույն տեղում, № 26։
10 Նույն տեղում, № 40։
11 Նույն տեղում, № 52։
12 Նույն տեղում, № 87։

Ընթերցողը, անշուշտ, նկատեց, որ խմբագիրը յուրովի կրկնում է Մ. Նալբանդյանի հավատամքը։ Դա նշանակում է, որ գրական-հրապարակախոսական ասպարեզ ոտք դրած օրվանից Մ. Փորթուգալյանը զինվորագրվել է Նալբանդյանի դրոշին։ Դա հավատարմության երդում է մեծ դեմոկրատ հեղափոխականի հիշատակի առաջ։ Իսկ հասարակ ժողովրդին լուսավորելու նպատակով նրա կատարած նյութական զոհողությունը՝ թերթը կես գնով նրանց տրամադրելը, բացառիկ երևույթներից է մեր մամուլի պատմության մեջ։

Հատկանշական է նաև, որ պայքարի մտնելով կրոնավորության դեմ, Փորթուգալյանը հաճախ է օգտվում Մ. Նալբանդյանի զինանոցից։ Նրա քննադատության առարկան նույն վանեցի Պողոս վարդապետն է, որ իր շահատակությունները հասցրել է մինչև այդ օրերը, Աղթամարի Խաչատուր կաթողիկոսը, Պոլսի պատրիարք Ներսես Վարժապետյանը և նրանց մանկլավիկները։ Իր խմբագրականներից մեկում նա նալբանդյանական «Երկու տողի» սրությամբ ամբողջացնում է իր ժամանակի կրոնավորության պատկերը. «Կղերականությունը,— եզրակացնում է նա,— այսօր խումբ մը մարդոց երեսին դիմակ եղած է՝ ամեն չարություն, ամեն պղծություն գործելու և տակավին ժողովուրդին առաջը իբրև սուրբ մարդ ներկայանալու... մարդասպանությո՞ւն անել կուզես. մի փիլոն առ վրադ՝ դաշույնը տակը պահելու համար. մի վեղար անցուր գլուխդ, ինարկե, երեսդ ծածկելու համար... Գողությո՞ւն անել կուզես, վարդապետի երկայն ու լայն բղանցքներով զգեստ հագիր...»[13]։

Գնալով ընդգծվում է Փորթուգալյանի զինակցությունը դեմոկրատական «Մեղու» և ապա «Թատրոն» երգիծաթերթերի խմբագիր Հ. Պարոնյանի հետ։ Լիբերալ և պահպանողական մամուլի, անարժան երեսփոխանների և կրոնավորների դեմ պայքարելիս նա հասարակական շարիքները հարվածում է նույն դիրքերից, երբեմն օգտագործում է Պարոնյանի սրամիտ խոսքերն ու բնորոշումները, բարձր գնահատում գրականության և լրագրական ասպարեզում նրա կատարած յուրաքանչյուր քայլը։ Իր թերթում նա հիացմունքով ծանուցում է. «Մեղուի խմբագիր-տնօրեն Հ. Պարոնյան Էֆենտին այս չորեքշաբթի օր (1871 թ. մարտի 20-ին— Գ. Մ.) սկսավ «Թեաթրո» անուն տաճկերեն թերթ մը հրատարակել։ Կշնորհավորենք Պարոնյան Էֆենտիին այս նոր ձեռնարկը։ Զավեշտական ոճին մեջ իր ունեցած հաջողությունը, գարմանալի ու ծիծաղաշարժ գտումները արդեն հայ ընթերցասիրաց մեջ ճաշակի տեր եղողներուն գովեստին արժանացած են։ Քաջահույս ենք, թե տաճիկ հասարակությունն ալ հիշյալ թերթին արժանի բաշալերություններ չունայներ»[14]։

Նույն ջերմությամբ ողջունել է նաև հայերեն «Թատրոն» գավեշտաթերթի երևումը։ Եվ ապա իր գոհունակությունն է հայտնել, երբ արձագանքելով «Ասիայի» կոչին, Պարոնյանը ևս իջեցրել է իր թերթի գինը։ Այդ առթիվ Փորթուգալյանը գրել է. «Թատրոնի խմբագիր Հ. Պարոնյան Էֆենտին նոր զոհողություն մ՚ալ ընելով, երեկեն սկսյալ (1874 թ. հունիսի 5/17-ից—Գ. Մ.) յուր թերթին գինը 20 փարայի իջեցուցեր է, հասարակության դյուրամատչելի ընելու համար։ Հուսով եմք, հասարակությունն ալ Թատրոնին իր ցույց տված քաջալերը կկրկնապատկե՝ հորում արժանի է»[15]։

---

13 Սույն տեղում, N 108։

14 Նույն տեղում, N 20

15 Նույն տեղում, N 45։

Բեհիսյանի և Խանճյանի «Ասիայի» վրա ամենօրյա հարձակումներ գործող Պարոնյանը իր հերթին ջերմորեն ողջունեց Փորթուգալյանի մուտքը լրագրական ասպարեզ, միշտ համախոհ մնաց, բարյացակամ, նույնիսկ այն ժամանակ, երբ «Ասիան» կշտամբանքներ ուղղեց իր հասցեին։

Փորթուգալյանի բնութագիրն ամբողջացնելու համար անհրաժեշտ է շատ համառոտակի անդրադառնալ այդ տարիներին պոլսահայ մամուլին զբաղեցնող մի հարցի։ Արդեն մի քանի տարի էր, որ մամուլում քննարկվում էր Ամբրոսիոս վարդապետ Իսկենտերյանի վարքագծի հարցը։ Այդ անարժան կրոնավորը գայթակղեցրել էր իր եղբոր՝ Պողոսի կնոջը։ Ազգային մարմինները անուշադրության էին մատնել Պողոսի դիմումները։ Վերջինի գանգատը քննել էր Բերայի ոստիկանական ատյանը, և որովհետև «իրեղեն ապացույցներ» չէին գտնվել, վարդապետին չէին պատժել։ Դա խիստ վրդովմունք էր առաջ բերել ժողովրդի մեջ։ Դեռ «Մեղուի» էջերում Պարոնյանն իր դատավճիռն էր կայացրել Ամբրոսիոսի մասին. Թերթի «Ասկե անկե» բաժնում «Համբավով իմաստուն, տաղանդով իմաստակ» կծու ոտանավորով ծաղրել էր նրա անբարոյական վարքագիծը։ Դրան հաջորդել էր «Պզտիկ թատերգություն մը» դավեշտը. երկու երգիծական հեպանկարով նա արդեն իր հաշիվը մարրել էր Ամբրոսիոսի հետ, հետագայում միայն երբեմն-երբեմն այս կամ այն առիթը օգտագործելով, կծու, հեգնական, շանթող խոսքեր էր ուղղում նրա հասցեին։ Բայց ահա «Հուշարար» ստորագրությամբ մի հոդված է երևում Պարոնյանի «Թատրոնում», որտեղ սուր քննադատության է ենթարկվում Ազգային վարչության, Կրոնական ժողովի, Պատրիարքարանի դիրքը Ամբրոսիոսի հարցի նկատմամբ։ Հուշարարը պահանջում է անպայման արդարացի վճիռ տալ Պողոսի գանգատին, պատժել հանցագործ վարդապետին։ Եթե ճիշտ է ազգային մարմինների հայտարարությունը, որ ոստիկանական ատյանը արդարացրել է վարդապետին և պատժել եղբորը, ապա թող այդ վճիռը տպագրվի թերթերում կամ ուղարկվի «Թատրոնի» դրասենյակը Հուշարարի հասցեով, որպեսզի պարզվի ճշմարտությունը, «որպեսզի նորանոր բեռներ ձեր վրա չի ծանրանան և դուք ալ արդեն ստանձնած բեռներեդ թեթևնար, ինչպես թեթևցունել հաջողեր եք ձեր խղճմտանքը»[16]։

Հոդվածը գրգռում է ազգային մարմիններին։ Պարոնյանը հրավեր է ստանում ներկայանալ Խառն ժողովի նիստին և բացատրություն տալ հիշյալ հոդվածի առթիվ։ Երգիծաբանը պատասխանում է հեգնանքով. «Զբաղված ըլլալնուս պատճառավ՝ պատասխաննիս ներկայացավ Պատրիարքարան, խնդրելով, որ ժողովը ուրիշ օր մը որոշե և թե պատրաստ ենք անձամբ պատասխանելու»[17]։ Չնայած այս պատասխանի ինքնավստահ շեշտին, թերթի հաջորդ համարներից մեկում լույս է տեսնում Պարոնյանի «Հետս կոչումը» հերքումը. «Ասկեց մեկ երկու շաբաթ առաջ Թատրոնի մեջ Հուշարար ստորագրությամբ հրատարակված հոդվածի մը դեմ Ամբրոսիոս վարդապետին Ազգ. վարչության բողոքագիր մատուցած և Խառն ժողովս ներկայանալու համար մեզի հրավեր գրկած ըլլալն ասկեց առաջ ծանուցած էինք։ Հավատարիմ անձերև առած տեղեկություններուս նայելով՝ Արժ. Ամբրոսիոս վարդապետն լուր եղբոր հետ ունեցած պատվո դատին մեջ անմեղ ելած և պետք

16 «Թատրոն» երգիծաթերթ, 1874, N 15։

17 Նույն տեղում, N 17։

եղած իլամն (անմեղությունը հաստատող վճռագիրը— Դ. Մ.) ալ առած է, բայց Կրոն. ժողովն ինչ-ինչ պատճառներու համար հիշյալ իլամին հրատարակությունը արգիլեր է։ Եվ որովհետև Հուշարարը իլամին գոյությանը վրա կկասկածեր, և հիմա բանի որ մեր կես պաշտոնական կերպով քաղված տեղեկություններն իլամին գոյությունը կհաստատեն, արդարասիրությունը կհարկադրե մեզ այս տողերը հրատարակել ի բժշկություն Արժ. Ամբրոսիոս վարդապետին վրա գայթակղյալ միտքերուն»[18]։ Սա արդեն նահանջ էր։ Այդ օրերին Հ. Պարոնյանը ճակատում էր Պատրիարքարանի դեմ Նար-Պեյի կողմից թույլատրված մեկից ավելի ապօրինի ամուսնությունների առթիվ։ Կարելի է մտածել, որ նա թերևս հեռանում էր մի ճակատից՝ մյուսը զորացնելու համար։

Ասպարեզի վրա մենակ է մնում «Ասիան», որը սակայն շարունակում է հետապնդել Ամբրոսիոսի խնդիրը։ Փորթուգալյանը, որ մինչ այդ գրել էր մի շարք մերկացնող հոդվածներ, այժմ գրում է ավելի կրքով, ավելի մանրակրկիտ։ Պարոնյանի «հետս կոչումը» տպագրվելուց հետո նա հայտարարում է, որ եթե Կրոնական ժողովը հրաժարվում է հրատարակել իլամը, ուրեմն այն պարունակում է կետեր, որ անհնար է հրատարակել, ուստի վարդապետի մասին եղած կասկածը «առավել կառավելու». «այս սլատն պատ դարձվածներեն հայտնի կտեսնվի, թե այս խնդրույն մեջ գաղտնի նենգություն մը և դավադրություն մը կա»[19]։ Կրոնական ժողովը «իր էսնաֆի կեղտերը փեշով ծածկելու» է ձգտում։ Կրոնական ժողովը իր վարմունքով իրավունք է տալիս մտածելու, որ կրոնավորի համար թույլատրելի է ամեն անբարոյականություն. «Շնությո՞ւն անել կուզես, մի տնտնար, շուտ վարդապետ եղիր. վանդի խալբախիդ շնորհիվ հոգևոր զավակներ կունենաս, զորս երբեմն-երբեմն երթալ մխիթարելը քու նվիրական պարտքդ կլինի»[20]։

Այստեղ է, որ «Ասիան» առաջին անգամ իր կշտամբանքի խոսքն է ուղղում Պարոնյանին, որը չի տեսել այդ իլամը, այլ «արժանահավատ մարդոցմե լսելով, հավատացած և գրած է», որ նա «պարզամիտ է գտնվել Կրոն. ժողովո մանովրներեն խաբվելով»։

«Ասիան» շահում է բարոյական հաղթանակ, բայց մեծագույն զոհողության գնով։ Նա ապացուցում է Ամբրոսիոսի հանցագործությունը հայ եկեղեցու և օսմանյան օրենքի առաջ։ Սակայն նրա հակառակորդները գտնում են Փորթուգալյանին պատժելու միջոցը. նրան հայտարարում են Պատրիարքարանի դեմ քինախնդրությամբ լցված, ժողովրդին խռովարարության դրդող անձնավորություն, որ վտանգավոր է նաև պետության համար։ Այս ձևով խմբագրված պատրիարքական բողոքագրի համաձայն տպագրական տեսչությունը խափանում է թերթը։ Նույն օրը խափանվում է նաև Պարոնյանի «Թատրոնը»։

«Ասիա» թերթի վերջին՝ 140-րդ համարը, լույս է տեսնում միայն տպագրական տեսչության հրամանի և խմբագրի «Հուսկ բանի» տպագրությամբ։ Այդ «Հուսկ բանը» գալիս է ամբողջացնելու թերթի գնահատականը։ Փորթուգալյանը գրում է, որ կրոնավորները «սրունքնին հանգրիճած այսր-անդր

18 Նույն տեղում, № 20։

19 «Ասիա», 1874, № 58։

20 Նույն տեղում, № 129։

կվազևին իրեն պատժելու և իրենց անարարոյական բարեկամին» պաշտպանելու համար։ Բայց անզոր գտնվելով բաց մարտում իրեն վնասել դիմեցին մատնության։ Պատրիարքը արիություն չունեցավ իրեն դատի հանձնելու, որովհետև վախեցավ նոր մերկացումներից, ուստի դաղտագողի «թադրիր» գրելով, դավեց իր դեմ։ Սակայն «լրագիրը ժողովուրդի ձայնին արձագանքն է և լրագիր խափանել՝ ժողովուրդին ձայնը խեղդել կնշանակ», այդ պատճառով էլ Ներսեսի պատրիարքության շրջանը պատմության մեջ պիտի արձանագրվի այս խոսքերով՝ «Ներսես պատրիարք՝ թշնամի տպագրական ազատության և պաշտպան խայտառակ թերթերին... Մեք հշմարտությունը խոսեցանք և զոհ եղանք... ավելի կսիրեմ, որ Փորթուգալյան անուն մի խմբագիր չհիշվի, քան թե հիշվի, որ ժողովուրդին իրավունքը Վարչության ծախելով, այս ու այն անձը կշողոքորթե որպեսզի ապրի»։

Անընկճելի էր Փորթուգալյանը. նա իր վերջին խոսքն ասում է հեգնանքով, սարկաստիկ խոսքերով դատավճիռ կարդում իր հակառակորդներին. «Փառավորվե՜, Ներսե՜ս սրբազան, փառավորվե՜ Ազգ. Վարչություն, թող «Ասիան» դադրի, վասն զի յուր եկեղեցիին պատիվին նախանձախնդիր՝ Ամբրոսիոսի պես մի կղերականի դեմ գրեց, Ամբրոսիոսի՝ որ յուր եղբայրին կինին հետ շնություն անել կհանդգնի և այդ պղծությունին մեջ թաթխված ձեռներով ս. պատարագ կմատուցանե... Փառավորվե՜, Ներսե՜ս սրբազան, փառավորվե՜ Ազգային Վարչություն, թող «Ասիան» դադրի, վասն զի Սահմանադրության մահը և ամիրայապետության կանգնումը գուժեց...»։

Ամբրոսիոսի գործի առթիվ Փորթուգալյանի ելույթների արդարացիությունը հաստատեց նաև «Մասիսը»։ Կ. Յուրյուճյանը մոռացավ նույն հարցի վերաբերյալ իր բռնած դիրքի նկատմամբ Փորթուգալյանի կծու հեգնանքները և, ըստ սովորականի դիվանագիտություն բանեցնելով հանդերձ՝ իր անհամաձայնությունն ու դժգոհությունը հայտնեց Պատրիարքարանի վարմունքից։

Պարոնյանը ևս մոռացավ իր նկատմամբ «Ասիայի» կսմիթները, բարձր գնահատեց Փորթուգալյանի ասպետական կեցվածքը և սկզբունքայնությունը, նշավակեց Ներսես պատրիարքի ընթացքը։ Տարիներ հետո «Լույս» պարբերականում զետեղեց պատրիարքի երգիծական դիմանկարը, որ եզրափակեց այսպես. «Սրբազան պատրիարքը իրեն թշնամի նկատելով դադրել տվավ «Թատրոնը», որ հանդգնած էր նորին սրբազնության մեկ շրջաբերականը հարվածել. այսպես խափանել տվավ «Ասիան», որ կրոնավորի մը անբարոյականությունը կձաղկեր»[21]։

«Ասիայի» խափանումը բացասական ազդեցություն ունեցավ պատրիարքի հեղինակության վրա. նա կողմնակի ճանապարհներով իմացրեց Փորթուգալյանին, որ ձեռականորեն ներումն խնդրի Կրոնական ժողովից և վերականգնի թերթը, բայց մերժում ստացավ։ Փորթուգալյանը հայտարարեց. «լավագույն կհամարիմ գրիչս կոտրել մեկդի նետել, քան թե շարունակել գրել շողոքորթության մեջ գայն թաթխելով»[22]։

---

21 Հ. Պարոնյան, Երկեր, հատ. 2, էջ 222։

22 «Քառասուն տարվա աշխատավորը» (ժողվածու), Կ. Պոլիս, 1914, էջ 14 (Տիգրան Զյոկյուրյանի հոդվածը)։

Մկրտիչ Փորթուգալյանը իր «Ասիա—Ձայն Հայաստանի» թերթով եկավ շարունակելու և զորացնելու Հ. Սվաճյանի «Մեղուով» սկսված և Հ. Պարոնյանի «Թատրոնով» շարունակվող հայ դեմոկրատական մամուլի առաջավոր ավանդները։ Չնայած իր կարճատև գոյությանը, այն բավական նշանակալից հետք թողեց հասարակական կյանքում և մամուլի պատմության մեջ։

КОНСТАНТИНОПОЛЬСКАЯ ГАЗЕТА «АСИЯ»

Г. А. МАДОЯН

(Резюме)

В истории армянской периодики почетное место принадлежит газете «Асия—Голос Армении», основанной сто лет назад в Константинополе под редакцией Мкртича Португаляна.

Газета имела демократическое направление. Отражая интересы народных масс, «Асия» выступала против антинародных действий армянского духовенства, реакционной печати и высокопоставленных лиц, за что, на основании жалоб константинопольских духовных властей, была закрыта турецкой цензурой.